ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19.03.2026թ.
Ժամը 11[35]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ԱԾ Շ և Վ բաժնի ավագ սպա, մայոր Ե. Մարգարյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ԱԾ Շ և Վ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Հովհաննիսյան,
ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ԱԾ Շ և Վ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Ղուկասյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/h	Մասնակցի անվանումը
1	«Արպանիվ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Արպանիվ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրության, վերոնշյալ փաստաթղթի իսկությունը ստուգելու նպատակով 12.03.2026թ. հարցում է կատարվել ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչությանը: 19.03.2026թ. հայտերի գնահատման և ամփոփման նիստի ժամանակ՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը /ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպության			
					անվանումը	գնային առաջարկը /ՀՀ դրամ/		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	ավտոմեքենաների անիվներ (Անվադող 225/75R16 ամառային)	հատ	1 600	41 440 000	«Արպանիվ» ՍՊԸ	69 333 333	13 866 667	83 200 000
2	ավտոմեքենաների անիվներ (Անվադող 12.00-20)	հատ	118	25 173 884	«Արպանիվ» ՍՊԸ	20 978 237	4 195 647	25 173 884
3	ավտոմեքենաների անիվներ (Անվադող 12.00-18)	հատ	118	25 292 002	«Արպանիվ» ՍՊԸ	21 076 570	4 215 314	25 291 884

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 20.03.2026թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Արպանիվ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգում անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

4.3 Ընթացակարգը գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը (պայմանագիր չի կնքվում):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ե. Մարգարյան

Գնահատող Վ. Հովհաննիսյան

Գնահատող Ա. Ղուկասյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան